



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18933

18934

18935

Վ. Կամիչյան

1. Բօհու Հ.-Կոկիս 1890

2. Ե. Շիռուշիս

Գոգիս Արիստի - Բիթիս 1905

3. Վ. Կամիչյան


Ասուլընդ Օհն

Մուկուս - 1892

աշբ. 3

391.99

DP-31



Վ Ր Ո Յ Տ Գ Ր Ո Կ Յ Յ Ա Ր Ե Թ Ե Կ Ե Յ Ե Յ

Տ Ե Շ

Ե. ՆԻԽՈՋՎԻԼԻ

(ԻՆԳՈՐԾՈՂՎԱ)

ԳՈԳԻԱ ՈՒԻԾՎԻԼԻ

(Պ. Ս. Տ. Ա. Ա. Մ. Յ.)

Հայուսակութիւն

Գ. Աւանիսանցի

Թարգմ. Դ. Ա.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան «ՀԵՇՈՒՅԱ-ԸՆԻ», 1905 թ.

Մատարակութանոց № 15

(83)

Գ. Բ. Ա. Յ. Գ. Ր. Ա. Կ. Ա. Յ. Ա. Խ. Թ. Ի. Ե. Ն. Ե. Յ.

899. 962.1 № 6

Է. ՆԻՆՈՋՎԻԼԻ

(ԽՆԳՕՐԾՎԱԾ)

ԳՈԳԻԱ ՈՒԻԾՎԻԼԻ

(Պ. Ա. ՏՄ ՍԻ Ա. Խ. Ք.)

Հրատարակութիւն

Գ. Աւանեսցի

Թարգմ. Պ. Ա.



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան «ՀԵՐՄԻՍ» Ընկ. 1905 թ.

Մադարեան փողոց № 15

(83)

4388

Дозволено цензурою. 18 января 1905 г. Тифлесъ.

10026-52



Գ Օ Գ Ի Ա Ռ Ի Ւ Վ Վ Ի Լ Ի

I

— Են զեկուցիսն *) էլի նշանակել են
մեր գիւղում: Այսօր գգիրն եկաւ և յայտ-
նեց, որ իւրաքանչիւր տուն տասը մանէթ
ավտի վճարէ զեկուցիայի ծախսի համար:
Փայտը, խոտը, սիմինդրն էլ առանձին,—
կոտրուած սրտով ասաց Մարինէն իր ա-
մուսին Գօդիային, Ֆրը վերջինս երեկոյ-
եան աշխատանքից տուն վերադարձաւ:

— Էլի զեկուցիա... հօ չես գժուել, ա
կնիկ. եթէ կրկին զեկուցիա նշանակեն, մեր
օջախը կը քանդուի, — ասաց Գօդիան, և նրա
դէմքի վրայ կնճիռներ երևացին:

— Ես ի՞նչ մեղ ունիմ, որ ինձ վրայ
բարկանում ես, — յանդիմանեց Մարինէն
ամուսնուն.

— Դու էլ հիմա բան ասիր. բարկանում
եմ. հասկացիր, էլի, ահինիկ, իմ՝ գժու-

*) Զեկուցիա — էկզեկուցիա:

հալս նրան համար է, որ չես ասել այն աղը-
նաքանդներին, թէ նադէլի, քահանայի,
փոշտի համար էլ հարկաւոր է հարկ վճա-
րել, ճանապարհների վրայ էլ պէտք է աշխա-
տել և, ի՞նչ գիտեմ, էլի ի՞նչ ուրիշ հազար ու
մի փորձանք է գալու մեր գլխին: Այս բաւա-
կան չէ, գեռ ասում էլ են թէ ձեր մէջ վնա-
սակար մարդիկ էք պահում, և դրա համար էլ
անցեալ տարի զեկուցիա նշանակեցին մեր
գիւղում: Հիմա էլի զեկուցիա: Կասէիր որ
աւելի լաւ է հոգիներս մէկ անգամից հա-
նեն ու մեզ ազատեն:

— Այդ ասելով Գօգիան, դառն մտած-
մունքների տակ ճնշուած՝ նստեց կրակի մօտ:

Գօգիա Ռւիշվիլին մի քառասուն տա-
րեկան թխագոյն, նիհար, ոչ գեղեցիկ, միշտ
մոայլութախծալի դէմքով տղամարդ էր. նրա
ըեղ ու միբուքը սկսել էր սիստակել. հաստ,
կիտուած յօնքելը խիստ կերպարանք էին
տալիս նրան: Գօգիայի հայրը կալուածա-
տիրոջ ծառայելով մինչև նրա վերջին շունչը
փչելը մօտը մնաց (նրա ժամանակ դեռ
գոյութիւն ունէր ճորտութիւնը): Մահից
յետոյ նա իր երեք որդիկերանց՝ Գօգիային և
երկու եղբայրներին ժառանգութիւն թողեց
մի խարխուլ, փայտաշէն տնակ, մի նա-

լիս *), մի Յացիսա **) և եօթը օրավար կոռ
ու բէգառի, կամ ինչպէս իրանք են ասում
նադէլի հոդ: Գօգիան եղբայրներից բաժա-
նուելով ստացաւ այս ստացուածքի մի եր-
րորդ մասը: Ճիշտ է, թէև Գօգիային, իբրև
աւագ որդու, փայտաշէն տնակ բաժին ըն-
կաւ, բայց նրա փոխարէն նալիան, Յաց-
իսան և մնացած սարք ու կարգը, միւս
եղբայրները վերցըին: Ի՞նչ ասել կուզէ, որ
այսպիսի աղքատ ընտանիքի ապրուստի
կարգի բերելը այնքան էլ հեշտ չէր. սակայն
Գօգիան և Մարինէն, ինչպէս երիտասարդ
և առողջ գիւղացիներ, լի յուսով և եռան-
դով կեանքի մէջ ոտ դրին ու սկսեցին գոր-
ծել: «Ի՞նչ անենք թէ այժմ աղքատ ենք.
մենք էլ կաշխատենք, մի քիչ նեղութիւն կը
քաշենք և յետոյ քաղցր կեանք կունենանք»,
—ասում էին նրանք: Ո՛չ մի դժուարութիւն,
սկզբներում, նրանց չէր վիատեցնում: «Ի՞նչ
անենք. այսօր չէ, գուցէ վաղը լաւ կը լի-
նենք», մտածում էին նրանք և եռանդուն
կերպով գիմաղբում էին բոլոր արգելքնե-
րին: Գօգիան տախտակներ տաշեց տնակը

*) Նալիս—մեծ ուահարան, յատկապէս սի-
մինդը համար:

**) Յացիսա—ճիպոտներից հիւսուած տնակ:

նորոգելու համար: Ժամանակն անցնում էր
բայց «քաղցր կեանքը» Գօղիայի ընտանիքի
համար ոչ մի տեղից չէր երկում: մինչդեռ
քանի օրերն անցնում էին, այնքան աւելի
ու աւելի անտանելի էր դառնում նրանց
համար այս կեանքի ծանր բեռը: Ինչպէս
ասացի, նրանք թիշ հող ունէին, այն էլ կոռ
ու բէգասի: Հարկերը օրըստօրէ աւելանում
էին, բացի դրանից, նրանք արդէն հինգ զա-
ւակների տէր էին: Եթէ ուրիշ բան էլ չը
լինէր, հէնց այդ հինգ երեխաների կերա-
կրելը հեշտ բան չէր խեղճ գիւղացու հա-
մար:

Գօղիան կրակի մօտ տեղաւորուելով՝
շարունակեց. «Այս քանդուած տեղում գի-
շեր-ցերեկ աշխատում եմ անդադար, քըր-
տինքս հողի հետ է խառնում, բայց էլի ոչ
մի բան դուրս չի գալիս և դեռ ապրուստ
քանի գնում, այնքան աւելի վատանում է,
կեանքը աւելի անտանելի դառնում»: Նրա
միրուք ու բեղերը այժմ աւելի սպիտակել
էին, նա, կարես, ձանձրացել-յոդնել էր
կեանքից. «Մահը լաւ է, քան այս աեսակ
ապրուստը», յաճախ հառաչելով ասում էր
նա:

—Աստծու առաջ մի մեղանչիր, ա-

մարդ. փառք Աստծու, մենք ողջ և առողջ
ենք, գլշեր-ցերեկ աշխատում ենք, բայց
չենք կարողանում երեխաների հացը վրայ
հասցնել: Ի՞նչ անենք, աշխատելուց մենք
չենք դադարել. իսկ թէ լաւ որ չը տեսանք,
երեի մեր ճակատագիրն էլ այս է եղել
Մենակ մենք հօ չենք այսպէս. հաղար զիւ-
ղացուց մէկին չես տեսնի, որ մեզանից ա-
ւելի լաւ վիճակ ունենայ: Ողորմած Աստ-
ուածը աշխարհը մեզ համար հօ չի ստեղծել»,
ասում էր Մարինէն իր ամուսնուն, երբ
նրանից գանգատներ էր լսում. սակայն Մա-
րինէն ինքն էլ յաճախ անիծում էր իր սկ
բախտն ու ծնուած օրը:

—Իբր թէ շատ ես միսիթարում ինձխօս-
քերովդ, էլի. ես էլ նրա համար եմ դժգո-
նում, որ այսպէս անտանելի է մեր կեանքը,
—պատասխանում էր Գօղիան իր կնոջը:

Եւ իրաւ, ի՞նչ միսիթարութիւն կարող
էր լինել Գօղիայի համար, քանի որ նա պարզ
տեսնում էր իր թշուառ դրութիւնը: Ան-
դադար եղան պէս աշխատել, քրախնք թա-
փել տանջուել, բայց էլի կին ու երեխա-
ները մերկ ու յաճախ քաղցած թողնել,
զուրկ սեպհական հողից, այն ինչ հարկերը
օրէ ցօր շատանում էին: Գաւառապետ, կալ-

ուածառէր, քահանայ, տանուառէր, երևակայեցէք մինչև անգամ գզիրն էլ նրան է սպառնում և նրա վրայ բռնանում. իսկ ապրուստը բարելաւելու յոյս ոչ մի տեղից չէր երևում: Միթէ կարող էր չը տիրել և չը զգուել իրանից: Այն տախտակները, որոնցով ուզում էր տունը նորոգել, վաղուց արդէն վաճառուել էին զանազան հարկեր վճարելու համար: Այդ հերիք չէ. նա ստիպուած էր իր կնոջ բերած օժիտը ևս՝ գորգ, կարպետ, պղինձ և «քիսէի» դէյրա, որ գնել էր Մարինէի համար հարսանիքի օրը, խստապահանջ հարկահաններին տալ: Օրինաւոր կերակուրների բացակայութիւնը, ընտանիքի մերկութիւնը կամ ինչպէս ինքը Գօդիան էր ասում՝ «դառն աղքատութիւնը», յաճախ զանազան հիւանդութիւնների պատճառ էին դառնում: Այսպէս մի անգամ ամառը նրա երեխաներից մէկը հիւանդացաւ, մեռաւ, միւսը հիւանդութիւնից ընդ միշտ խուլ-համր դարձաւ: Այս տեսակ անմիտիթար դրութիւնը Գօդիային կեանքից զգուեցրել էր և նա մեռելիներին էր երանի տալիս և այդ պատճառով գանգատում էր կեանքից ու աշխարհից: Նա յաճախ այնպիսի բաներ էր խօսում, որ խողներն ասում էին՝ եթէ

այդ խօսքերը տեղ համելու լինեն, Գօդիան սիրիրական կը լինի:—Մի անգամ եկեղեցու մասին խօսակցութիւն պատահեց. Գօդիան խօսակցութեան մէջ մտաւ և այնպիսի խօսքեր ասաց, որ քահանան ուզում էր նրան դատարանի մատնել, և այդ բանը նա անշուշտ կանէր, եթէ ժողովուրդը չաղաչէր նրան, որ ներէ «տգէտ» գիւղացուն: Մի անգամ էլ դատարանում այն տեսակ խօսքեր արտասանեց, որ աները միայն փող ծախսելով մի կերպ կարողացաւ նրան տանուէրի ձեռքից ազատել:

—Յետոյ մինչև կաղանդ պիտի վճարեմ տաս մանէթը,—հարցըրեց Գօդիան իր կնոջը, երկար մտածելուց յետոյ:

—Այս երեք օրում ով չը վճարէ, կը կողոպտեն, պատասխանեց կինը:

—Աստուած նրա օջախը շէնացնէ. զավոդ ունիմ, թէ ինչ է. որտեղից ճարեմ տասը մանէթը: Կաղանդից յետոյ էլ լաւ անուշ կանեն, եթէ տասը մանէթ կարողանամ ճարել. շատ հեշտ են կարծում համ տասը մանէթ ճարելը: Եթէ ամբողջ ձմեռ անվերջ աշխատեմ, չեմ կարող տասը մանէթ ստանալ: Միթէ բաւական չէր, որ անցեալ տարի կաշիս քերթեցին. ասում էին՝ աւագակը

մեր ձեռքից փախաւ։ Ես ի՞նչ անեմ, որ փախաւ։ Ես ի՞նչ աւազակ փախցնող եմ։ Եթէ փախցնել կարողանայի, ես ինձ կը փախցնէի և միանգամից կազատուէի այս տանջանքներից։ Այս բանում տանուտէրն ու գրագիրն էլ են մեղաւոր. զեկուցիայի ծախս ասելով՝ աշխարհ են կողոպտում և կէմն իրանց զրագանն են խոթում. Վատր նրանք են, նրանք մարդ են։ Բայց չեն թողնում, որ մենք մեր խելքով զրագիր կամ տանուտէր ընտրենք։ Ի՞նչ էք կարծում. իրանք փախցնում են այն աւազակներին, իսկ յետոյ ասում, թէ ձեզ աւազակներից պիտի պաշտպանենք և մեզ մաշկում են։ Այդքան վնաս ոչ ոք և ոչ մի աւազակ չի կարող պատճառել։ Միթէ այսքան հարկերը բաւական չեն. մէջքս ծոռւել է այսքան հարկ տալով, այժմ էլ այդ հնարեցին։ Երանի մի անգամից հոգիներս հանեն ու պլծնեն, ասում էր Գօդիան զայրացած և անդադար ծխում կարձ չիրուխը։

—Ես ի՞նչ իմանամ, այսպէս ասաց այն պապանձուելուն, ասաց Մարինէն նեղացած։

—Է՞ն, ի՞նչ անեմ որ ասաց. չեն թողնելու, որ հանգիստ սրտով կաղանդը լուսացնեմ։ Բայց դիցուք կաղանդն էլ լուսա-

ցրի, իսկ յետոյ... յետոյ որտեղից պէտք է այդքան փողը ճարեմ։

Վերջում Գօդիան ինքն իրան մխիթարվեց այն յուսով, թէ մինչև կաղանդ երեք օր կայ, այդ երեք չորս օրում չեն կողոպտի, իսկ յետոյ կաշխատէ մի տեղից ճարել և կը տայ։

II

Տարեմուտինախընթաց օրն էր։ Զը նայած որ գիշերը բաւականին ձիւն էր եկել, բայց առաւօտեան երկինքը պարզ էր։ Զմեռուայ անգօր արկը դանդաղօրէն բարձրանում էր ջինջ ու փայլուն երկնակամարի վրբայով։ Նրա ճառագայթներն անցնում էին ձիւնապատ ծառերի միջով։ Գօդիա Ուկշվիլին նստած էր իր տանը։ Նա կարծես մոռացել իր բոլոր ցաւերն ու հոգսերը. ուրախ զուարթ գէմքով երեկն իր կնոջ հետ էր խօսում, երբեմն երեխաներին էր փաղաքշում։ Գօդիան ուրախ էր, որ կաղանդի «հաց ու զինին» և ուրիշ բաները արդէն պատրաստ էին։ Նրա գէմքի վրայ փայլող ժպիտն ու գոհունակութիւնը Մարինէն Աստծու ողորմութիւն էր համարում. նա իրան

այդ օրը երջանիկ էր զգում, կարծես 15—
16 տարեկան օրիորդ լինէր, այնպէս ուրախ-
ուրախ թխում էր կաղանդի խանապուրին*):
Գօղիայի երեխաներն էլ, ինչ ասել կուզէ,
ծիծեռնակներինման ծրբլում, հրճում էին,
—կաղանդը մօտենում էր, «խաճապուրինե-
րը» թխուում էին, չաղ խոզն ու հաւերը մոր-
թուելու էին, ծնողներն էլ ուրախ էին, սը-
րանից աւելի ի՞նչ բախտաւորութիւն կա-
րող էր լինել նրանց համար։ Ամենից շատ
ուրախ էր փոքրիկ Թէբրոն, որ մէկ-սէկ
մօր մօտէր վազում և սկսում էր թոթովել.
«Մայլիկ, մեծ հաց էլի կը սինես», երբեմն
էլ հօր գիրկն էր ընկնում և ասում. «Հայ-
լիկ, էգուց կաղանդ է, ես չեմ քնի...»

—Հա, աղջիկս, կաղանդ է, սուրբ Բար-
սեղն է գալու, հաց, խոզ... Աստծու տուած,
ամեն ինչ ունենք։ Ես առաւօտեան հրացան
կարձակեմ, ասում էր Գօղիան փառքշե-
լով իր փոքրիկ աղջկան։ Այս տեսակ ուրա-
խութիւն էր թագաւորում այն առաւօտեան
Գօղայի ծխից սկացած, փոքրիկ փայտաշէն
տնակում, այն տնակում, որի կահաւորու-

*) Խաճապուրի—իւղից ու պանրից պատ-
րաստած հաց։

թիւնը կազմում էին մի ծուռ ու մուռ տախտ՝
ծածկուած խսիրով, որի վրայ կային մի հը-
նացած կեղտոտ նահալի, մի վերմակ և մի
բարձ։ Տախտի տակը խառնիխուուն ածած
էին մեծ ու փոքր պղինձներ, երկու հատքե-
րանները կոտրած փարչ։ Թարէքի վրայ դար-
սուած էին տաս-տասներկու փայտէ աման-
ներ, մի փայտէ սանդ և մի խոնչայ։ Տան
մի անկիւնում ընկած էին կացին և ուրա-
գը, իսկ միւս անկիւնում երկու քթոց։ Սրա-
նով էլ վերջանում էր Գօղիա Ուիշվիլու տան
ունեցած-չունեցածը։ Տան մութ անկիւ-
նում պսպղում էր հրացանը, որ Գօղիան
վերցըել էր աներոջից կաղանդի առաւօ-
տեան «պարպելու» համար։ Գօղիան երե-
խաներին փաղաքշելուց յետոյ՝ Մարինէին
դիմեց։

—Դէհ, Մարինէ, դու մի ձեռաց ջնուր
տաքացըու, միանգամից վերջանենք այս
հաւերի և խոզի մորթելը։

—Ի՞նչ եղաւ քեզ, ա մարդ, ի՞նչ ես
շաապում. այդպէս անհամբեր մի լինիր, քիչ
համբերութիւն ունեցիր. հացերը հրէս կը
թիւմ, կը վերջացնեմ, մի քիչ այդ հացից
կուտես, յետոյ հաւերն ու խոզն էլ կը մոր-
թես, —քաղցրութեամբ պատասխանեց Մա-

ըինէն իր ամուսնուն և շուռ տուեց կըակի
վրայ դրուած կարմրած՝ խաճապուրին, որ
տեղ-տեղ տաքութիւնից տրաքուել էր և
որի միջում գանուած պանիրն ու իւղը ա-
խորժակ էին գրգռում:

Գօգիան լսեց իր կնոջ խորհուրդը և
յետաձգեց խոզի և հաւերի մորթելը: Նա
սկսեց, ժամանակ անցկացնելու համար, դի-
տել հաւաքունն ու խոզանցը և ապա հըր-
ճուանքով գարձաւ Մարինէին:

—Ի՞նչ չաղացել է էն խոզը, աքաղաղն
էլ պակաս չաղ չի: Խեղճեր զիտէն ար-
դեօք որ միայն երկու ժամ կեանք ունեն...
Մեծ մեղք է նրանց մորթելը, Մարինէ,
բայց մարդիկ քանի դրանց նմաններին են
մորթուում:

—Մեղք է: Ես ի՞նչ գիտեմ, Աստուած
է այդպէս կարգադրել, մենք ի՞նչ մեղաւոր
ենք, —պատասխանեց Մարինէն:

—Եթէ Աստուած ուրիշ կերպ կարգա-
զրէր, աւելի լաւ կը լինէր: Հապա դու մի
լաւ մտածիր. այն հաստավիզ խոզը պիտի
վէր գցեմ ու մորթեմ. յետոյ չը գիտես թէ
ի՞նչպէս դառն պիտի թուայ մահը. մինչև
երկինք է համանում նրա ճղողը, —խոր մը-

տածերով ասաց Գօգիան և ապա փոխեց
խօսակցութեան նիւթը:

—Էս տարի շատ աջողակ էինք, Մա-
րինէ. առաջ այսպիսի հեշտութեամբ չէինք
կարողանում կաղանդի հաց-զինին հասցնել:
Այս, սուրբ Յարսեղի զօրութիւն, եթէ ևի-
կարի ասածները ճիշտ դուրս գան, վերջը
լաւ ապրուստ կունենանք: Տէր Աստուած,
եթէ այս կաղանդից իմ բախտի անիւը դէ-
պի լաւը դառնար, ասաց Գօգիան և նրա
աչքերը յուսով փայլեցին:

—Օրինեալ է նրա զօրութիւնը, մի ան-
գամ՝ էլ մեզ նման թշուագների կողմը կը նու-
յի և քաղցը կեանք կը տայ, նոյնպիսի յու-
սով պատասխանեց Մարինէն իր ամուսնուն:

—Այդպէս է, Մարինէ. ասած է՝ խեղճը
շունչը յուսով կը փէ: Կաղանդի համար մի
փութ Ղրիմի ալիւր ճարեցինք և կարծես
թէ ամբողջ աշխարհ մերն է, —դառն ծիծա-
ղով ասաց Գօգիան իր կնոջը և սկսեց արնդ-
դել խաճապուրին, որ նոր թոնրից հանած
էր: Մարինէն պատրաստում էր բաժանել
ամուսնուն և որդիկերանց. այդ բոսպէին զըր-
սում Գօգիայի հաւատարիմ Ծաւիա ա-
նով շունը սկսեց սաստիկ հաջել, որ շուսով
զարհուրելի կալանչոցի փոխուեց:

—Այ մարդ, շանը սպանեցին, բայա-
կանչեց ապշած Մարինէն:

—Գօղիա, Էյ Գօղիա,—լսուեց գրսից:
—Ըհը, գգիրի ձայնն է, —ասաց Մարի-
նէն վրդոված:

—Էս կաղանդ օրով ի՞նչ գործ ունի
ինձ հետ զգիրը, —ասաց Գօղիան Մարինէից
ոչ պակաս վրդովուած և մէջքը կուացրած մօ-
տեցաւ գուանը: Հէնց այդ ժամանակ միւս կող-
մից վրայ հասան զգիրն ու վեց զազախներ:
Բակի գուան մօտ ընկած էր վիրաւորուած
Շաւիան ու տանջւում էր վերջին շնչում:

—Գօղիա, մեզ շան տեղ դրեցիր, ի՞նչ
է. տաս մանէթը շուտ կանցելարիա կը բե-
րես: Երեք օր առաջ յայտնեցի ձեր տանը,
իսկ հիմա էլի երկրորդ անգամ կրկին քաշ
տուիր այստեղ: Ես ոչինչ, բայց էս ոռու-
ներին ի՞նչ ջուղաբ ես տալու: Ճաշի համար
մի կով հերեք չի անի, —բարկացած ասաց
զգիրը Գօղիային:

—Իւանէ, ի՞նչ ես ասում. տասը մանէթ
հեշտ էր ճարելլ. ոչ թէ երեք օրում,
այլ երեք ամսում էլ չեմ կարող տասը մա-
նէթ ճարել...

Գօղիան ուզում էր դեռ շարունակել,
բայց զգիրը նրա խօսքը կտրեց.

—Զես կարող ճարել. ոռուների մօտ
այդ չի անցնի. «ոյժը գտրիզուսն էլ է վա-
րում», այդ հօ լսէլ ես. ճարել կը տան. լաւ
է, անխօս տաս, սրանք խօսել շատ չեն սի-
րում:

—Իմ զաւակների մորթող լինիմ, իւա-
նէ, եթէ սկ զրօշ ունենամ. մարդկութիւն
արա, համբերիր մի այս կաղանգն անցնի,
յետոյ մի տեղ վարձով կը մտնեմ, կը վճա-
րեմ, —աղաչում էր Գօղիան գգիրին:

—Հասկանում ես ասածդ. հէքէաթ ես ա-
սում ի՞նչ է, ի՞նչ վարձով գնալ: Աշխարհ են
քանդում ու լացացնում, դու ի՞նչեր ես ա-
սում. փող չունես, ուրիշքան տուր, —ոչխար,
խոզ, հաւ խօմ ունես:

—Ո՞րտեղից ունեմ, այ մարդ, ոչխա-
րը ամառը զայլը կերաւ, հաւերը, խօմ զի-
տես, որ հիւանդութիւնից սատկեցին: Մա-
րինէն հաղիւ կարողացաւ կաղանդի համար
մի երկու հաւ պահել, այն խօմ չեմ տալու:

—Հա, հա, հա... ասում եմ աշ-
խարհ են քանդում ու լացացնում, իսկ զու
էլի քու կաղանդի մասին ես մտածում. շնուր
տուր, եթէ ոչ քո կաղանդը հարամ կանեն:

Գօղիան վէտացաւ և խօսք չէր կարո-
ղանում ասել:



—Ի՞նչ ես մտածում, վերջացրնու. քեզ
նման ուրիշն էլ ունենք, ճաշից յետոյ այն-
տեղ ենք գնալու, —կրկնեց զգիրը:

—Խանէ, Աստծուն նայիր, քրիստո-
նեայ մարդ եմ, ասում եմ չունեմ, համա-
րեա արտասուելով պատասխանեց Գօդիան:

Դգիրի ընկերները այլևս չը կարողա-
ցան տանել զգիրի և Գօդիայի այս երկար
խօսակցութիւնը. նրանք նեղացած դռացին.

—Ի՞նչ էք շատ խօսում, կամքով չի տա-
լիս, ոյժով կը խլենք, —այդ խօսքերով նը-
րանք խուժեցին դէպի ներս:

—Եկաք շունն սպանեցիք, իսկ հիմա
էլ ուզում էք տժւնս կողոպտել, ես ձեզ
ցոյց կը տամ, —գոռաց Գօդիան և ամուր
կերպով հրեց այն դազախին, որ այդ մի-
ջոցին ուզում էք տուն մտնել:

Դազախը գետին զլորուեց: Գօդիան ու-
զում էք տուն վազել հրացան վերցնելու և
նրանով դիմադրելու, բայց այդ բոպէին,
նրա զլիխին տեղադին թրի կոթի հարուածներ:

«Վայ», ճշաց Խեղճը և գետին փուռեց:
Արիւնը բղիւց ճեղքուած զլիխից և մի քանի
վայրկեանում Գօդիայի մազերը կարմիր ներ-
կուեցան: Մարինէն, որ մինչ այդ դռան յե-
տին էք թագնուած, այդ ամենը տեսնելով,

զարհուրելի ճչոցով դուրս պրծաւ և կանչեց.
«Սպանեցին, օգնեցէք» և զգիրի վրայ
ընկաւ, ուզում էր գոնէ եղունգներով նրա
երեսը չանգուել, սակայն խեղճ կնոջը դա-
զախները բռնեցին և յանձնեցին իրանց լն-
կերներից մէկին: Այս լնկերը արաղով հար-
բած էր, նա տեսաւ թէ չէ Մարինէի գե-
ղեցիկ գէմքը (նա գեռ երիտասարդ և բա-
ւականի գեղեցիկ էր), սկսեց զօռով պաշ-
պչել նրան: Խեղճը ճչում էր, աղաղակում
և երկնքից ու աշխարհից օգնութիւն աղեր-
սում. բայց օգնութիւն ոչ մի տեղից չէր
համառնում: Գօդիայի երեխաներից մի քանիսը
այստեղ ահից լեղապատառ ճչում էին,
միւսները թագ էին կենում: Աղմուկի վրայ
հուաքուեցան մի քանի հարեաններ. բայց
Բնչ կարող էին անել. ամեն մէկը իր կա-
շուի համար էր զսղգողում:

Կէս ժամ չանցած, զգիրն ու դազախնե-
րը՝ Գօդիային թոկով կապած և մէջտեղ
զցած՝ տանում էին գաւառապետի մօտ:
Արանց հետեւում էին Գօդիայի կաղանդի խո-
զով ու հաւերով բեռնաւորուած մի քանի
զիւղացի, որոնց յետելից զնում էր Մարի-
նէն:

Գգիրը խկապէս չէր ուզում տանե-

Գօղիային, քանի որ մեղաւորն ինքն էր, որ
խոզը և հաւերը խլեցին և միւնոյն ժամա-
նակ դաշտիները Գօղիային բաւականին
ծեծեցին, բայց նրա կարծիքը հաւանու-
թիւն չը գտաւ իր ընկերների կողմից:

—Սա անօրէն բան է, նոյնիսկ մեզ
ուզում էր ծեծել, անպատճառ պիտի պատ-
ժուի—ասացին դաշտիներ և Գօղիային ա-
ռաջ զցեցին մտրակի հարուածների տակ:
Գօղիայի հարեաններից մի ծերունի փոր-
ձեց խնդրել զգիրին և դաշտիներին, որ Գօ-
ղիային բայց թողնեն, բայց երբ դաշտիները
մտրակ ցոյց տուին, ձայնը կտրեց:

III

Տափարակ տարածութեան վրայ կտ-
ռուցուած էր մի մեծ փայտաշէն տուն՝ տ-
անց ցանկապատի: Սա Ա. զիւղի գատա-
րանը, կամ ինչպէս տեղացիներն էին
ասում «կանցելարիան» էր: Կաղանդից մի
քանի օր տուաջ այս կանցելարիայում հիւրա-
սիրուեցան գաւառապետը, ոստիկանները և
ուստի դաշտիները: Այս անկոչ հիւրերի այցե-
լութեան պատճառն էր «աւազակներին» հա-
րածելու գործում Ա. զիւղացոց թոյլ վերա-
բերմունքը: Նրանց գալուց յետոյ՝ զիւղացիք

արդէն խօսում էին չարաբաստիկ զեկուցիայի
մասին: Երբ լսում էին թէ կրկին զեկուցիա
են նշանակել, Ա. զիւղացի բնակիչները ամ-
բողջ մարմառով գոզգոզում էին: Նրանք անցեալ
տարի զեկուցիայի համն արդէն առել էին:
Զեկուցիան աւերեց նրանց զիւղը, այն
ժամանակուանից հասցըած մնաները մին-
չե այժմ գեռ չէին ուզզուել, իսկ այժմ էլի
նոյնն էր սպասում:

Գաւառապետը բաժանեց ոստաններին.
մի մասը տեղաւորեց այն ընտանիքներում,
որոնք կասկածի տակ էին աւազակներին
թագցնելում, նաև այն անձանց մօտ, որոնք
որիէ ազգակցութիւն ունէին «աւազակների»
հետ: Ինքը գաւառապետը, ոստիկանները
և մնացած դաշտիները մի առժամանակ
գտնուում էին զիւղի կանցելարիայում: Բայց
գաւառապետից, որ կարգադրութիւն անե-
լուց յետոյ զիւղաքաղաք պիտի վերադառ-
նար, միւնները պէտք է տեղափոխուէին,
զիւղացիների մօտ մինչեւ որ կը կարողանա-
յին աւազակներին բռնել: Գաւառապետի
գալուց սկսած՝ կանցելարիայում ահազին
բազմութիւն էր հաւաքւում: Թէ նրա և թէ
հետևողների ծախսը զիւղացիք էին տես-
նում: որը փայտ, որը դաշտիների ձիանների

համար խոս ու սիմինդը, որն էլ զեկուցիա-
յի ծախսի համար փող էր բերում և աղա-
շում, պաղատում էին զրագրին և տանու-
տէրին, որ սատցական տան՝ երկրորդ
անգամ չը վճարելու համար։ Յաճախ այս-
պէս գաւառապետը զիւղերն էր մանդալիս
«աւազակներ» բռնելու, բայց չէր կարողա-
նում նրանց դժնել և այդ պատճառով զիւ-
ղացոց վրայ էր չարանում, կանչում էր տա-
նուտէրի և գրագրի ցոյց տուած «կասկա-
ծելի» անձանց, որոնցից մի քանիսին բան-
տարկում, մի քանիսին մտրակով և ճիպո-
տով ծեծել տալիս։ Իսկ այս անգամ նա ա-
ւելի չարացած էր այս պատճառով, որ իր
այնտեղ եղած ժամանակը Ա. զիւղից էլի-
երկուսը փախան աւազակութիւն անելու:
«Ո՛չ, սրանք անպատճառ ապստամբուել են-
ուզում, մինչև սրանց կաշին չը քերթեմ,
սրանք խելքի եկող պառողներ չեն», ասում
էր զայրացած գաւառապետը։

Կէս օր էր, երբ զզիրն ու դազախները
Ա. զիւղի կանցելարիային հասան, հետները
բերելով թոկով կապուտած Գօղիս Ուշվի-
լուն։

— Տանուտէր, կողոպտեցին, քանդե-
ցին, ծեծեցին, տիրութիւն արա, եթէ ար-

դարադատ ես, տիրութիւն արա, եթէ ոչ
քո աչքի առաջ զլուխս կը կարեմ, աղաղա-
կում էր Գօղիան՝ կանցելարիան համե-
լուն-պէս։

Գզիրն ու դազախները, ընդհակառակը,
Գօղիային մեղաղըում էին օրինազանցու-
թեան համար։ Նա ձեռք էր բարձրացըել զա-
զախների վրայ և հարկը ժամանակին չէր
տուել։

— Սուս, սուս, թող գաւառապետը չը
լսէ, — ասումէին զիւղացիք, աշխատելով փա-
կել Գօղիայի բերանը։

— Ես էլ այն եմ ուզում, որ լսէ, եթէ
նա արդարադատ զաւառապետ է, թող տի-
րութիւն անի, ինձ կողոպտեցին, աղաղա-
կեց Գօղիան։

Տանուտէրը Գօղիայի մասին դեռ չէր
յայտնել զաւառապետին, որ նրա աղմու-
կի վրայ դուրս եկաւ ու հարցըեց։

— Ո՞վ է այս զիւղացին։

— Անհնազանդի մէկը, ձերդ զերազան-
ցութիւն, հարկ չի ուզում վճարել, — ասաց
զազախներից մէկը։

— Տիրութիւն արէք, աղա ջան, պաշտ-
պանեցէք, կաղանդի օրով կաղոպտեցին, քան-
դեցին, ծեծեցին խեղճ քրիստոնեայիս։ Աղա

ջան, ի՞նչ էին ուզում ինձանից, գլուխս ին-
չու ջարդեցին, —բայլը վերցնելով գլխից,
աղերսում էր Գօդիան գաւառապետին՝ ցոյց
տալով արիւնաշաղախ գլուխը:

—Մեզ հետ կուռում էր, ձերդ գերա-
զանցութիւն, մեզ վրայ ձեռք բարձրացրեց
և ուզում էր դեռ հրացան արձակել, —ասաց
զազախը: Վերջը գգիրին ցոյց տալով՝ Ահա
սա էլ մեզ հետ էր, բոլորը գիտէ:

Գգիրը տատանում էր, երեսում էր որ
խիզճը նրան տանջում էր, բայց զազախնե-
րից վախեցաւ և այդ պատճառով Գօդիանին
մատնեց. —«Ճիշտ է ձերդ գերազանցութիւն,
անհնազանդ է», աւելացրեց նա:

Այդ գիւղացուն այստեղ բերէք, —հրա-
մայեց գաւառապետը:

Գօդիային գաւառապետի մօտ տարան:

—Քեզ ով սովորեցրեց անհնազանդ լի-
նել և զինուորականի դէմ ձեռք բարձրացնել,
—զսյրացած հարցրեց գաւառապետը Գօ-
դիային:

—Ես չէ, աղա ջան... նրանք կողոպտե-
ցին ու ծեծեցին, դողդոջուն ձայնով պա-
տասխանեց Գօդիան, և էլի ինչ որ ուզում
էր ասել, բայց գաւառապետի մտրակը ընդ-
հատեց նրա ասելիքը:

—Այ, դու անզգամ, այ... տեսնում
էք՝ ուզում են ապստամբուել, ես գիտեմ
թէ դուք, ովքեր էք, ապասեցէք, ես ձեզ
ցոյց կը տամ. բոլորիդ էլ առանձին-առան-
ձին կը քերթեմ... Ապա համարձակուեցէք...
կատաղած գոռում էր գաւառապետը և ա-
րագ-արագ պատշգամբում յետ ու առաջ
քայլում:

Գօդիան երկար ժամանակ անշարժ
կանգնած էր, նրա կուրծքը ուժգին բարա-
խում էր և ծանր շունչ քաշում: Վերջապէս
գաւառապետը ներս գնաց: Գօդիան տեղից
շարժուեց և սկսեց աղազակել.

—Մեզ համար արդարութիւն չը կայ
այս աշխարհում. ինձ կողոպտեցին, քան-
դեցին, ծեծեցին. կարծում էի թէ արդարու-
թեան դռան մօտ եմ եկել, բայց աւագ,
այստեղ աւելի վաս օրի զցեցին ինձ: Ուր
ես, ով արդարութիւն, ով Աստուած...

Ժողովուրդը՝ «սուս, սուս» ասելով աշ-
խատում էր նրա բերանը փակել. իսկ Գօ-
դիան անվերջ աղազակում էր: Մարինէն,
որ այս բոլորը տեսնում էր, սկզբում ձայն
չէր հանում, բայց այժմ նա էլ, իր ամուս-
նու նման կանչում էր. «Մեզ համար ար-
դարութիւն չը կայ. գաւառապետ չէ, թուրք

է», հէնց այդ միջոցին դուրս պրծաւ գաւառապետը և ձայն տուեց.

—Քաշ տուէք այս անզգամին և ճիպոտի երեսուն հարուած հասցըէք, իսկ յետոյ երկուսին էլ բանտարկեցէք:

Ճիպոտի անունը լսելուն պէս մի ինչ որ խորհրդաւոր մութ պատեց այնտեղ հաւաքուածների գէմքին և տիրեց խորին գերեզմանային լուութիւն... Գօղիան գունատուեց, խեղճի լեզուն կապուեց—զարհուրելի գէմքով կանգնած էր բազմութեան մէջ: Մարինէն լաւ չը հասկացաւ գաւառապետի հրամանը, բայց զգում էր, որ ինչ որ վատքան պիտի անցնէր իրանց զիխով և սարսափահար սպասում էր թէ ինչով պիտի վերջանար այս բոլորը: Անցաւ մի քանի ըռպէ: «Շնուտ», նորից լսուեց գաւառապետի հրամանը և ոսների թրխիոց: Տանուտէրը Գօղիային մօտեցաւ: «Վայ ինձ, օդնեցէք», — գոռաց Գօղիան. ուզում էր դիմադրել, բայց մի քանի զագախների ուժեղ բազուկներ տապալեցին նրան: Ականատեմների մարմնով սարսուռ անցաւ, երբ լսուեց Գօղիայի սրտածմլիկ հառաչանքն ու աղաղակը: Մարինէն այլևս չը կարողացաւ դիմանալ այս տեսարանին, ուշաթափ գետին ընկաւ:

Երեկոյանանում էր: Զինջ կապուտակ երկինքը և ճիւնապատ գետինը ինչ որ նուիրական տեսք էին տալիս բնութեանը: Կարծես թէ երկինքն ու երկիքը շունչ էին քաշում: Սաստիկ ցրտից գետինը սառել էր: Զը նայած որ Ա. գիւղի չքաւոր դասակարգի շրջանում թափիծն ու վիշտն էր տիրում, սակայն չէին կարող սովորութեան գէմ գնալ: Գաւառապետի պատուէրը կատարելուց յետոյ ամեն մէկը շտապում էր իր տուն, վաղուայ կաղանդի պատրաստութիւնները տեսնելու: —Ի՞նչ անենք, ասում էին նրանք. —ասած է՝ սովորութիւնը հաւատի նշան է: Խեղճ յուսախաբները ապագայում ոչ մի լաւ բանի չէին սպասում:

Գօղիա Ռւէշվիլին տիխուր սրտով, գլուխը կախած հետեւում էր արցունքից աչքերը ուռած Մարինէլին: Գաւառապետն ուղեց մեծահոգի երեալ. նա տանուտէրին պատուիրեց, որ վաղուայ նոր-տարուասիթով առ այժմ բաց թողնէ Գօղիային: Իսկ ինքը գնաց քաղաք, որ իր ընտանիքի հետ միասին նոր-տարուն դիմաւորէ:

Արդէն մութն էր, երբ Գօղիան ու

Մարինէն տուն հասան։ Առաւօտուայ տես-
սարանով սարսափած երեխաները, որ ամ-
բողջ օրը անտէր էին մնացել, երբ ծնողնե-
րին տեսան, ուրախ-ուրախ առաջ վազեցին
և շրջապատեցին նրանց։ Փոքրիկ թէքրոն
առողաց դէպի Գօգիան, ցրտից կարմրատա-
կած փոքրիկ թաթիկներով սկսեց հայրիկի
միրուքը քաշըշել և ասել. «հայլիկ, ու
է հաց, հաւ... Երբ կը բելէք, մայ-
լիկը պահեց...» Գօգիան զգուելու փո-
խարէն՝ կատաղած ձեռքով հրեց իր փոք-
րիկ աղջկան և խանձուած փայտերի մէջ
գցեց։ Խեղճ երեխան այնպիսի աղեկտուր
ճչոց բարձրացրեց, որ Մարինէն նրան տես-
ճչոց քիչ մնաց ուշաթափուէր։ Նա իր օ-
նելով քիչ մնաց ուշաթափուէր։ Նա իր օ-
րում չէր տեսել, որ Գօգիան այդպէս անո-
րում չէր տեսել, որ Գօգիան այդպէս անո-
րում չէր տեսել. Ել ի՞նչպէս կարող է կերակրի մա-
սին մտածել. երանի չը խելագարուի, ու-
րիշ ոչինչ չեմ ուզում։ Ասենք ի՞նչ կայ
զարմանալու, ինչ որ այսօր նրան հասցրին,
այն բանը, մինչև անդամ հրէան չէր անի
քրիստոնեային։ Էն հալում նրան տեսնողը
կը գժուէր, բայց ես, շան բաժին դառածու,
ի՞նչպէս ողջ մնացի... Աստուած, գնւ նրա
դատաստանը տես, ով մեզ այս օրը հաս-
ցրեց։ Մարինէն իր խօսքերը անէծքով վեր-

համար, յետոյ բաժանեց, Գօգիային էլ առա-
ջարկեց, բայց նա չընդունեց։

— Զե՞ս ուտում։ Շատ մտածելով ի՞նչ
կը լինի, ինչՔըս կաւելանայ, այ մարդ։ Շա-
տերին մեզնից էլ նեղ օրը գցեցին։ Զե՞ս
լուել, ասած է՝ «ցաւին քարէ պալսպի նման
պէտք է զիմազրել»։ Սիրտդ հանգստացրու,
քիչ արադ խմիր, զինին էլ վրայից. միթէ
կարելի է այսպէս ամբողջ օրը առանց ու-
տելու մնալ։ Այս ասելով Մարինէն մօտեցրեց
ամուսնուն, փայտէ ափսէն, որի վրայ
դրուած էր մի բաժակ գինի և պանրով ու-
խւզով թխած բլիթի կտոր։

— Հեռացիր, գոռաց Գօգիան կնոջ վրայ
և հաց-զինին ափսէյով կրակը շպրտեց։

— Վայ իմ օրին, երեսի վրայ գոյն չի
մնացել. Էլ ի՞նչպէս կարող է կերակրի մա-
սին մտածել. երանի չը խելագարուի, ու-
րիշ ոչինչ չեմ ուզում։ Ասենք ի՞նչ կայ
զարմանալու, ինչ որ այսօր նրան հասցրին,
այն բանը, մինչև անդամ հրէան չէր անի
քրիստոնեային։ Էն հալում նրան տեսնողը
կը գժուէր, բայց ես, շան բաժին դառածու,
ի՞նչպէս ողջ մնացի... Աստուած, գնւ նրա
դատաստանը տես, ով մեզ այս օրը հաս-
ցրեց։ Մարինէն իր խօսքերը անէծքով վեր-

ջացրեց այն յուսով, թէ Գօղիան կը քնէր և կը հանգստանար. իսկ ինը սկսեց կադանդի պատրաստութիւն տեսնել. Բայց ինչ պատրաստութիւն կարող էր տեսնել. խող այլս չունէին, հաւանոցում ոչ մի հաւ չէին թողել, ոչ մի խաճապուրի չէր մնացել—բոլոր տարել էին: Մարինէն ժողովեց մնացած ալիւրը, հունցեց, կրակի վրայ դրեց: Յետոյ ուղեց մի երկաւ հաւ բռնել, բայց արդէն հաւերը ծառի վրայ էին թառել, ինչպէս պիտի բռնէր: Երեխաների օդութեամբ կարողացաւ ծառից երեք հաւ իջեցնել, որոնք այս ու այն կողմ էին փախչում: Շատ չարչարուեց Մարինէն, բայց չը կարողացաւ ոչ մէկը բռնել: Շատ էր խանգարում նրան փոքրիկ թեբշոն, որ հօր վրայ նեղացած՝ մօրից պոկ չէր գալիս. մայրը որքան աշխատում էր, որ նա հօր մօտ մնար, չէր լինում, կրկին մօր ետեից էր վազում: Վերջապէս կարողացաւ երկու հաւ բռնել:

«Եյնքան այս ջուր կարուածների յետեկից ընկայ, որ առանց այն էլ շշմած գլուխը աւելի ևս պարտում է», խօսում էր խըս աւելի ևս պարտում է», խօսում էր ինքն իրան Մարինէն: Քիչ հանգստանախն իրան յետոյ՝ հաւերը մորթել տուեց, թեփլուց յետոյ՝ հաւերը մորթել տուեց, թեփլուց, մի խաճապուրի թիւեց, մաքուր մեղ-

րեց մոմ պատրաստեց, մի գաւ «Օդէսայի» զինի հանեց կարասից: Երբ Մարինէն գործը վերջացրեց՝ արդէն կէս-գիշեր էր:

Իսկ Գօղիան այդ միջոցին ծանր մըտածմունքներով պաշարուած՝ նայում էր կրակին: Նա չիբուխի սիրահար էր, ուրիշ ժամանակ բերանից չէր հանում, իսկ այժմ չիբուխի մոռայել էր: Փոքրիկ թեբշոն բարկացած դէմքով երբեմն հօր վրայ էր նայում, երեսում էր որ նա չէր մոռացել իրան կրակի մէջ զցելը: Գօղիայի դէմքի վրայ խորհրդաւորութիւն և յուսահատութիւն էր նկարուած, երեխաները վախենում էին հայրիկից. ոչ ոք չէր համարձակւում ձայն-ծպտուն հանել, կամ նրան մօտենալ: Տան մէջ մեռելային լոռութիւն էր թագաւորում:

—Քոնդ չի տանում—հարցը եց Մարինէն իր ամուսնուն.—տաք ջուր կը բերեմ, ոսներդ լուա, պառկիր... արդէն կէս գիշեր է:

Բայց Գօղիան կարծես թէ չէր լսում կնոյն խօսքերը, մտախոհութեամբ կրկին նայում էր կրակին: Մարինէն կրկնեց իր խօսքերը, բայց էլի ոչ մի պատասխան չըստացաւ: Աշխ ու վանի քաշեց և սաստիկ յոգ-

նած պառկեց երեխաների մօտ, այն յուսով
թէ Գօգիան էլ վաղ թէ ուշ կը պառկի:
Սաստիկ յոգնածութիւնից ուժասպառ Մա-
րինէն խակոյն աչքերը փակեց: Տան մէջ
խորին գերեզմանային լոռութիւն էր տիրել.
միայն երբեմն Մարինէի ու երեխաների
խոմիոցները խանգարում էին այդ լոռութիւ-
նը: Կրակը հանգչելու մօտ էր, մութ պա-
տերի մէջ ինչ որ անախորժ, սարսուռ ազ-
գող խաւար էր տիրում, որի մէջ առարկա-
ները հազիւ էին նշմարում: Միայն հրա-
ցանը, որ կախուած էր անկիւնում, պապը-
ղում էր աղօտ լոյսի տակ: Գօգիան նըս-
տած էր անշարժ, քունը մօտ չէր գալի նրա
աչքերին. նա երբեմն-երբեմն գլուխը բար-
ձրացնում էր և նայում դէպի այն անկիւնը,
որտեղ հրացանն էր կախուած. նրա ուշքն
ու միտքը դէպի հրացանն էր ուղղուած:
Այս դրութեան մէջ անցաւ գիշերը, հասաւ
արշալոյսը. ամեն կողմից արդէն սկսել էին
աքաղաղները կանչել: Գօգիայենց աքաղաղն էլ
թիերը թափահարեց ու սկսեց պարզ ու զիլ
ձայնով «ծուղուրուղու» կանչել. նա իր տի-
րոջ նոր-տարին էր շնորհաւորում: Աքաղա-
ղի ձայնը լսելուն պէս՝ Գօգիան խելագարի
նման գլուխը դէս ու դէն շարժեց. թւում

էր թէ նա մի բանից հրաժարւում էր: Նա
վերկացաւ նայեց քնած կնոջ և երեխաների
կողմը. բոլորն էլ խոր քնած էին: Մի քա-
նի բոպէ սկսեց նրանց նայել, երկի ուղում.
էր իմանալ, թէ ոչ ոք արթուն չէր: Յետոյ
զգուշութեամբ մօտեցաւ անկիւնին, վերդ-
րեց հրացանը և դէպի դուռը դիմեց: Դուան
մօտ նա կրկին կանգ առաւ շնչառապառ, ա-
կանջ զրեց քնած կնոջն ու երեխաներին:
Նրանց մեղմ շնչառութիւնն էր միայն լըս-
ում: Վերջը Գօգիան զգուշութեամբ դուռը
բաց արտաւ և դուրս վնաց: Կանգնեց գուան
մօտ: Լիալուսինը արդէն արևմուտք էր թե-
քուել և դէպի Գօգիայի բակն էր նայում:
Սաւած ձիւնի վրայ ծառերը իրանց ստուեր-
ներն էին ձգել: Հանդարտ, սառնամանիքից
ծանրացած օգում պարզ լսւում էր աքա-
ղաղների կանչը: Գօգիան աչքը դէպի այն
կողմը գարձեց. լուսնի լուսի տակ երկում
էր նրա Ծաւիա շան դիմկը: «Խեղճ իմ
Ծաւիա... ինչպէս էր կալանչում... երեխ
շատ դառն է եղել մահը... մտմտաց ինքն
իրան Գօգիան և շուռ եկաւ դէպի դուռը,
կարծես թէ դուան հետ էր խօսում: «Դաւա-
ճանում եմ քեզ—սկսեց նա հազիւ լսելի
ձայնով—իմ անգին ընտանիք: Դաւաճանում

եմ քեզ, Մարինէ, և ձեզ, սկսասնւն զաւակ-
ներս: Ես գնում եմ, ազատում եմ, իսկ
ձեզ թողնում եմ այս տանջանքների մէջ:
Էլ չը կարողացայ դիմանալ և փախչում եմ:
Դաւաճանում եմ քեզ, Մարինէ: Երեխաներիս
քո յուսով եմ թողնում և փախչում: Դու
աւելի քաջ գտնուեցար, քան ես... ի՞նչ յոյ-
սերով տուն ու տեղ դրինք... Միթէ կը
մտածէի՞, որ այսպիսի վախճան պիտի ու-
նենար... ի՞նչ օրում են մնալու այսուհետե
զաւակներս: Ներիր, Մարինէ, ներեցէք զա-
ւակներս, ներէցէք, ես զլուխս ազատում
եմ, բայց ձեզ անտէր եմ թողնում: Ի՞նչ
անեմ..., Վկայ է Աստուած, ամբողջ կեան-
քումս զիշեր-ցերեկ դադար չեմ ունեցել,
քրտինքս հողի հետ էր խառնուում, բայց իմ
սկ օրին փրկութիւն չը հասաւ. մի ուրախ
օր չը տեսայ... Այդ գեռ ոչինչ, բայց մըտ-
րակով ծեծուել... Ո՛չ, սրանից յետոյ այլիս
չարժէ ապրել... Այստեղ Գօղիան կրկին սի
քանի ըոպէ մտածողութեան մէջ ընկաւ,
յետոյ ձեռքով թափահարեց և ասաց խոռվ
ձայնով. «Ո՛չ, անկարելի է, ամեն ինչ վեր-
ջացած է ինձ համար: Մնաս բարեաւ, Մա-
րինէ, մնաք բարեաւ սիրելի, երեխաներս:
Գնում եմ, ուր, ես ինքս էլ չը զիտեմ...

Թէրը, ներիր, որ երէկ զիշեր քեզ ծեծե-
ցի. գնաւ էլ, Մարինէ, որ պատասխան չը տուի:
Ամենքիցդ էլ ինպում եմ, որ ներէք ձեր
դաւաճան Գօղիային... Դուք կարծում էք,
հէշտ է ինձ համար ձեզանից բաժանուելլ:
Գնալ... բայց ուր, ես ինքս էլ չը զիտեմ...
Գլուխս պարաւում է, ամբողջ մարմնով դո-
զում եմ, աչքերս սթնում են... Ո՛չ, վերջա-
ցած է, վերջացած...»:

Գօղիան այդ խօսքերով լցրած հրացանը
շտապով ուղղեց գէպի իր կուրծքը և ոտով
կայծառին զիպաւ. հրացանը որոտաց, նա
կանգնած տեղից ցած գլորուեց: «Դու փո-
խարէնը հատուցանես, Աստուած», խոռվ ձայ-
նով արտասանեց նա և լնդ միշտ աչքերը
փակեց:

Հրացանի ձայնը Մարինէին զարթե-
ցրեց:

— է՛յ, Գօղիա, չես լսում, արդէն լու-
սացել է, հրացանի ձայն է լսում: Մենք
էլ վեր կենանք կաղանդին դիմաւոր ենք,—
ձայն տուեց Մարինէն իր ամուսնուն, կար-
ծելով թէ նա կրակի մօտ է քնած:

«Ի՞նչ խորն է քնել... լաւ, թող մի քիշ
քնի: Դեռ ես վեր կը կենամ, իսկ յետոյ կը
զարթնեցնեմ... թոնդ քնի, մեղք է նրան զարթ-

նեցնելը... ամբողջ գիշեր նստած էր, ի՞նչ-
պէս կարող էր քնել: Ի՞նչ օր զցեցին երեկ
նրան, լաւ է որ դեռ ապրում է»... Այս-
տեղ Մարինէն խկոյն յիշեց, որ երեկ Գո-
գիան իրան պատասխան անդամ չը տուեց:
Անմիջապէս վեր կացաւ կրակ վառեց, և
սկսեց ամուսնուն վնատրել: Գօգիան ոչ մի
տեղ չէր երևում: «Ուր է գնացել արգեօք»,
ասաց ինքն իրան Մարինէն և բաց արաւ
դուռն ու գուրս գնաց որ կանչի: Ոտքը շէմ-
քից գուրս գնելուն պէս, թթին վառօդի հոտ
դիպաւ: Մարինէն սաստիկ վախեցաւ այդ
հոտից: «Երեխ քամին է բերել մօտականե-
րից», մտածեց նա և սիրու առնելով, սկսեց
«Գօգիա» կանչել: Պատասխան չը կար:
«Երեխ գետակն է գնացել երեսը լուանա-
լու», ասաց ինքն իրան Մարինէն և ինքն էլ
ուզեց գնալ, գէպի գետակը, որ հոսում էր
իրանց տնից շատ մօտիկ:

Երկու քայլ չարած, նրա ոսները մի փա-
փուկ բանի դէմ առան ու վայր ընկաւ: Դա
Գօգիայի անշնչացած դիակն էր, որ մինչ այդ
Մարինէն չէր նկատել: Լուսինը հազիւ էր
լուսաւորում. պատերի ստուերները ծածկել
էին նրա մարմինը: «Վայ ինձ», գոչեց Մա-
րինէն և ուշաթափուեց:

Լուսացաւ: Սառած գետինը հայելու
նման վայլում էր: Օդը ծանրացել էր սաս-
տիկ ցրախց և մարդու շնչառութիւնը գըժ-
ուարացնում: Ա., զիւղում անընդահատ հրա-
ցանի ձայներ էին լսում. ժողովուրդը կա-
զանդին էր զիմաւորում:

— Էս ի՞նչ փորձանք է պատահել. Էս
ի՞նչ տեսակ ձայներ են գալիս Գօգիայենց
տանից. կատաղած գայլ է վրայ տուել, ինչ
է,— կանչեց Գօգիայի հարևաններից մէկը,
երբ նա առաւօտեան դուռը բաց էր անում,
և խկոյն գէպի Գօգիայենց վազեց: Սրան
հետեւցին նաև միւս հարևանները:

Հարևանները Գօգիայենց բակը հասան.
Նրանց աչքին մի զարհուրելի տեսարան
բացուեց. Մարինէն դանակը ձեռին երեխա-
ների յետեկց էր ընկել: Երեխաները ճշալով
այս ու այն կողմն էին փախչում և թագ
կենում. բայց Մարինէն հեռուից նշմարում
էր նրանց, զլուխը քարշ էր գցում և սկսում
նայել, կարծես կատուն ծիտեր էր որսում:
«Հաղա», կանչում էր նա և գէպի թագստեան
տեղը դիմում: Երեխաները մօր ձայնը լսելով
ուրիշ կողմ էին փախչում: Երբ Մարինէն

Նրանցից մէկին հասնում և ուղում էր բըռ-
նել, երեխան սկսում էր սաստիկ ճշալ.

«Վայ, վայ օգնեցէք, օգնեցէք, մորթեց»:

Այս ճշոցի վրայ Մարինէն կանգ էր առ-
նում. «Վայ» կոչում էր ինքն էլ և միւս երեխա-
յի կողմն էր անցնում: Տան առաջ, փոսում
ընկած էր Գօգիաչի դիակը. Նրա գէմքը
այնպիսի սառը, խորհրդաւոր կերպարանք
էր ընդունել, որ նրան տիսնողը չէր կարող
ամբողջ մարմնով չը դողալ: Նրա զզզզուած
բեղ ու միրուքը, սպիտակախառն երկար
մազերի մի մասը արեան մէջ էր թաթախ-
ուել: Մի բուռը հողով էր լցուած, միւս
ձեռքում մի փունջ մազ կար: Ուների մօտ
փորուած հողը ցոյց էր տալիս, որ նա մի
քանի անգամ ոսները ուժով գետնին էր
քսել. երկի կեանքից բաժանուելը ծանր էր
թուացել խեղճին: Տան մէջ անկողնի վրայ
դրած էր կիսամորթ փոքրիկ թէբրոն, որ
երբեմն մի ոտը խսրին էր բսում և բաժան-
ում իր անբիծ կեանքից:

— Ի՞նչ խաբար է, այ աղջիկ, ի՞նչ է, —
դուացին դարհուրած հարևանները Մարի-
նէին:

— Սուս, սուս, չը դարթեցնես. սուրբ
Բարսեղն է, — ինչ որ օտարոսի շշուկով պա-

տասխանեց Մարինէն հարևաններին, յետոյ
մի աղջկայ մօտենալով փսփսաց ականջում.

«Երէկ գիշեր երկնքից իջաւ ո. Բարսեղը,
ասաց որ աշխարհը պիտի կործանուի ու
փախաւ»: Հարևանները, որ մինչև այդ բա-
ւականին հաւաքուել էին, մի կերպ բոնեցին
Մարինէին, որ վախկոտ ձայնով ճշում էր.
«Ներս խուժեցին, բոլորը տարան, սպանե-
ցին, օգնեցէք»... Մրանից աւելի ոչինչ չը
կարողացան իմանալ: Պարզ էր, որ Մարինէն
խելազարուած էր: Ուրիշ ճար չը կար:
Հարևանները Մարինէին կապեցին, ներս
տարան: Հաւաքեցին այս ու այն կողմ թագ-
նուած երեխաններին, որոնք գեռ ևս դուրս
չէին եկել թագստատեղերից, վախենալով՝
չը մինի մայրիկը թէբրոյի նման իրանց էլ
մորթէ: Նրանցից մէկը տախտի տակն էր
մտել. հազիւ կարողացան նրան մի կերպ
դուրս քաշել, յանձնեցին հարևաններից մէ-
կին, յետոյ մարդ ուղարկեցին տանուտերի
մօտ, եղելութեան մասին նրան յայտնելու:
Հետևեալ օրը տանուտերը եկաւ արձանա-
գրութիւն կազմեց, ցուցակագրեց Գօգիայի
ընտանիքի դոցքը, որբերի հետ միասին յանձ-
նեց հարևաններից ընտրուած ինսամակալին:

Այս գէպից յետոյ անցաւ մի քանի

տարիւ: Մարինէն խելագարուած, պատառուած շորերով փողոցէ փողոց էր շրջում և անցուդարձ անողին ասում. «Երէկ զիշեր երկնքից իջաւ ո. Բարսեղը և ասաց, որ աշխարհը պիտի կործանուի»:

Վերջապէս մի օր մահը վերջ դրաւ թշուառ արարածի դառն կեանքին:

Գօղիայի տունը աւերակ էր դարձել, միայն տան պատերն էին կանգուն մնացել. տանիքը վաղուց փակել ու քանդուել էր:

Մի երկու տարի ևս և ոչ ոք չէր տսիլ թէ այդտեղ մարդիկ են բնակուել: Բայց ահա մէկը՝ կրկին տանիքը վրայ հաւաքեց և օջաղը կենդանացրեց: Դա Գօղիայի անդրանիկ որդին էր (միւսները գեռ զանազան անձանց ժօտ ծառայում էին), որ ամուսնացել և իր հօր առնն էր դարձել:

Ցանկանք, որ սա հօր բաղդին չարժանայ, այլ երջանիկ ու քաղցր կեանք ունենայ:



10

18933
18934
18935

2013

